կապիտալի շահերին։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության փաստերի հիման վրա Ա. Ոսկանյանը ցույց տվեց, թե ինչպես ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանները իրենց իմպերիալիստական նպատակները «հիմնավորում» են դեռպոլիտիկական տեսությունների միջոցով։ Զեկուցողը բացահայտեց նաև «էյզենհաուերի դոկտրինայի» էությունը, ընդգծելով, որ Միացյալ Նահանգների առաջադրած ծրագիրը, Մերձավոր և Միջին Արևելքի վերաբերյալ. իրենից ներկայացնում է իմպերիալիստական էքսպանսիայի արտահայտություն, հանդիսանում է գեռաէլիտիկական տեսությունը պրակտիկայում իրականացնելու ԱՄՆ-ի կառավարող շրջանների հերթական փորձը։

Իր զեկուցման մեջ փիլ. դիտ. թեկնածու Ս. Թովմասյանը փորձ արեց բնութագրելու Արևելքի ժամանակակից մի քանի հետամնաց և գաղութային երկրների զարգացման կապիտալիստական ուղին շրջանցելու առանձնահատկությունների հարցը։ Զեկուցողը այդ երկրները բաժանեց երեք խմբի. առաջին խմբի մեջ մտնում են այն երկրներն ու ժողովուրդները, որոնք սոցիալիզմին անցան ՍՍՌՄ-ի սիստեմում. դրանք են մեր Հայրենիքի միջին-ասիական ռեսպուբլիկաների ժողովուրդները, որոնք սոցիալիստական հասարակարգ կառուցեցին՝ շրջանցելով կապիտալիստական տնտեսաձևը։ Երկրորդ խմբի մեջ զեկուցողը դասեց Չինաստանի, Մոնղոլիայի, Վիետնամի, Հյուսիսային Կորեայի ժողովուրդներին, որոնք, թոթափելով գաղութային լուծը, հաստատուն կերպով բռնեցին սոցիալիստական զարգացման ուղին։ Երրորդ խմբի մեջ մտնում են այն երկրներն ու ժողովուրդները, որոնք, ազատագրվելով զարգացած կապիտալիստական տերությունների գաղութային շահագործումից, իրենց երկրներում կատարեցին տնտեսական և քաղաքական մի շարք վերափոխումներ։ Այդպիսի երկրների թվին են պատկանում Հնդկաստանը, Ինդոնեզիան, Եգիպտոսը, Սիրիան, Ցեյլոնը և այլն։

Ընդհանուր գծերով բնորոշելով առաջին և երկրորդ խմբի մեջ մտնող երկրների և ժողովուրդների սոցիալիզմին անցնելու ուղիները, նրանց հիմնական առանձնահատկությունները Ս. Թովմասյանը ավելի հանգամանորեն կանգ առավ երրորդ խմբին պատկանող երկրներում կատարված սոցիալ-տնտեսական տեղաշարժերի վրա։ Նոր, թարմ տվյալների հիման վրա զեկուցողը փորձ արեց անել մի քանի տեսական ընդհանրացումներ։

Զեկուցումներից հետո ելույթ ունեցան ընկ. ընկ. Ա. Հարությունյանը, Ս. Բաղալյանը, Ա. Ցրաղայպանյանը, Վ. Ղաղանչյանը, Դ. Հարությունյանը։ Նրանք նշեցին Սեկտորի կազմակերպած սեսիայի նշանակությունը և միաժամանակ վեր հանեցին կարդացված զեկուցումների արժանիքներն ու մի շարք թերությունները։

Եզրափակման խոսքում Սեկտորի վարիչ Հ. Ասլանյանն հայտնեց, որ ընթացիկ տարում նախատեսվում է կազմակերպել եռ երկու սեսիա՝ «Դիալեկտիկական մատերիալիզմի հարցերը ժամանակակից պահանջների լույսի տակ» և «Ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերը» թեմաներով։ Այդ սեսիաները կազմակերպվելիս հաշվի կառնվեն, ասաց նա, ինչպես ընկերների դիտողություններն ու ցանկությունները, այնպես էլ այս սեսիայի փորձը՝ հետագա սեսիաները գիտական ավելի բարձր մակարդակով անցկացնելու համար։

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՍՍՌՄ ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

1956 թ. նոյեմբերի 20-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գեղարվեստների ակադեմիայի Կերպարվեստի թեորիայի և պատմության գիտահետազոտական ինստիտուտի Ժողովրդական արվեստի և գեղարվեստական արդյունաբերության սեկտորի նիստը, որին համատեղությամբ մասնակցում էին ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության Ակադեմիայի և Պետական պատմական թանգարանի ներկայացուցիչները՝ Ա. Ի. Լեոնովը, Ն. Մ. Տեմերինը, Ա. Ք. Սուլտիկովը, Ի. Մ. Բիրիկովան, Ա. Շ. Մնացականյանը, Տ. Գ. Գոլբերտը, Մ. Մ. Պոստնիկովան, Մ. Վ. Շչեպկինան, Ն. Ռ. Լեվենսոնը, Ի. Մ. Սուսլովը, Ս. Ս. Սլիսարևը, Տ. Նազարյանը։ Քննարկման էր դրված Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» աշխատությունը։ Մասերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցող ընկերները վեր հանեցին գրքի արժանիքները։ Նրանց կարծիքով գիրքն, ընդհանուր առմամբ, իրենից ներկայացնում է օրիգինալ, արժեքավոր և լուրջ աշխատասիրություն, որտեղ շատ բան է արված, չնայած և կան վիճարկելի խնդիրներ։ Արժեքավոր համարվեց հատկապես այն, որ գրքի մեջ բացահայտվում են զարդարվեստի իմաստային նշանակությունը և ռեալիստական հիմքերը, մի բան, որ մեծ նշանակություն ունի և՝ ազդագրագետների, և՝ արվեստագետների համար։ Իմաստային նշանակության ըմբռնումը օգնում է երկրի էսթետիկական գնահատմանը։ Նպատակահարմար և ցանկալի համարվեց Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» գրքի ռուսերեն թարգմանությունը։